



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր գյուղ համայնք 10-րդ փողոց՝ 11 վարչական շենք
Հեռ. (0222) 3-49-93, Էլ. փոստ norgyax@mail.ru

0-111

17.12. 2015թ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզպետ
պարոն Կ. Գուլոյանին

Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 30 հոդվածի 8-րդ կետի համաձայն
Ձեզ է ներկայացվում Նոր գյուղի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի
10-ի թիվ 9 հերթական նիստի որոշումները.



Համայնքի ղեկավար

Գ. Թադևոսյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Նոր գյուղ համայնք, հեռախոս, 0222 3 49 93

էլ.փոստ E-mail Norgyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<10>> դեկտեմբերի 2015թ. N 31

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՇԵՐԹ ԱՎԱՆ ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ, հողվածով համայնքի **ավագանին որոշում է.**

Հաստատել համայնքի ավագանու հերթական 9 նիստի օրակարգը

1. Համայնքի վարչական տարածքում 2016թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին.
2. Գյուղապետարանի աշխատակազմի թվաքանակի և հաստիքացուցակ հաստատման մասին.
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր գյուղ համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը սահմանելու մասին.
4. Նոր գյուղ համայնքի 2016թվականի բյուջեն հաստատելու մասին

Կողմ

Դեմ

Ձեռնպահ

ԱՐՄԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԱՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱՂԱԽԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ԱՇՈՏ ՎԱՐՈՒՆՅԱՆ



(Handwritten signatures)

ՂԵՎԱՎԱՐ

(Handwritten signature)

ԳՐԻՇԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր գյուղ համայնք, հեռախոս, 0222 3 49 93
էլ.փոստ E-mail Norgyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<10>> դեկտեմբերի 2015թ

N 32-Ն

ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ
ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ԴՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով. համայնքի **ավագանին որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նորգյուղի համայնքում 2016թվականի համար սահմանել օրենքով սահմանված տեղական պորքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ

Դեմ

Ձեռնպահ

ԱՐՄԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԱՂՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱՂԱԽԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ԱՇՈՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԳՐԻՇԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ



7 4 4 5 1 4 4 5
Նոր գյուղի համայնքի սահմանում
2016թվականի դեկտեմբերի 10-ի
N 32-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ
ԴՐՈՒՅՔԱԶՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանել 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ տեսակները
և դրույքաչափերը (ՀՀ դրամ) .

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված
ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ
հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

Հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,
այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի
մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության
օբյեկտների համար՝

15 000 դրամ.

2) սույն կետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

3) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների
համար՝

30 000 դրամ.

4) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների
համար՝

50 000 դրամ.

5) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

50 000 դրամ.

6) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող
Օբյեկտների համար՝ մինչև

100000 դրամ.

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

1) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող/ոչ հիմնական/
օբյեկտների համար՝

3 000 դրամ.

2) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝

5 000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ
օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման
աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ
սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե
սահմանված կարգով կասկած ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիֆային չափերն
ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ սփորգեմբյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր
մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝
տեղական տուրքը սահմանվում է

3 000 դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման
աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիֆային
չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ սփորգեմբյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի
ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն որոշման
հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի «1» պարբերությամբ սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև
նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը՝
օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության
մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիֆային չափերն ընդլայնող
այլ կառույցների (այդ թվում՝ սփորգեմբյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության
փոփոխություն, ապա, սույն որոշման իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ
կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով
սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական
այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

5 000 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում
վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3 500 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների
ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3500 դրամ:

5. Համայնքի տարածքում

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել
յուրաքանչյուր օրվա համար մեկ քառակուսի մետրի համար 350 դրամ.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի
կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական
հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
150 000 դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար
տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 30 000-դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի
մանրածախ առուվաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր տարվա
համար տեղական տուրք սահմանել՝ 50 000 դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի
կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու
թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

- 1) առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ.
- 2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ.
- 3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 դրամ.
- 4) խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ.
- 5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ.
- 6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության
համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրք սահմանել

- 1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող
արտաքին գովազդի համար 1000 դրամ.
- 2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք
գովազդող արտաքին գովազդի համար 2500 դրամ.
- 3) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.
- 4) դատարկ գովազդային վահանակների համար 700 դրամ.

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար
տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու/ բացառությամբ երթուղային տաքսիների / ծառայություն
իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել
1 000 դրամ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գյուղ համայնք, հեռախոս, 0222 3 49 93
էլ. փոստ E-mail Norgyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<10>> դեկտեմբերի 2015թ N 33

ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԵՎ
ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅԱԿԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին որոշում է

Հաստատել համայնքի ղեկավարի աշխատակազմի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի.

Կողմ

Դեմ

Ձեռնպահ

ԱՐՄԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԱՂՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱՂԱԽԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ԱՇՈՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՎԱՐ



ԳՐԻՇԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ



ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿ

Նոր գյուղի գյուղապետարանի աշխատակազմի

Աշխատակիցների թվաքանակը՝ 13

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելվածարը	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1		Համայնքի ղեկավար	Քաղաքական	-	1	205000			205000
2		Համայնքի ղեկավարի տեղակալ	Հայեցողական		1	72800			72800
3		Աշխատակազմի քարտուղար	Համայնքային ծառայության	1.2-1	1	166000			166000
4		Գլխավոր մասնագետ	Համայնքային ծառայության	2.3-1	1	165000			165000
5		Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-1	1	145000			145000
6		Առաջատար մասնագետ	Համայնքային ծառայության	3.1-2	1	145000			145000
7		1-ին կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.2-1	1	140000			140000
8		2-րդ կարգի մասնագետ	Համայնքային ծառայության	3.3-1	1	72800			72800
9		Հավաքարար	Տեխնիկական սպասարկման		1	72800			72800
10		Պահակ	Տեխնիկական սպասարկման		2	78000			156000
11		արդահանության բանկոր	Տեխնիկական սպասարկման		1	110000			110000
12		Էլեկտրիկ	Տեխնիկական սպասարկման		1	78000			78000
	Ընդամենը				13				1528400

Գյուղապետարանի
աշխատակազմ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր գյուղ համայնք, հասցե, գ նոր գյուղ հեռախոս,
222 3 49 93 էլ.փոստ E-mail norgyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<10>> դեկտեմբերի 2015թ

N 34

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳՅՈՒՂ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԶԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջներով

Համայնքի ավագանին որոշում է.

Համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը սահմանել 205000 դրամ:

Կողմ

Դեմ

Ձեռնպահ

ԱՐՄԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԱՂՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱՂԱԽԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ԱՇՈՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԳՐԻՇԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր գյուղ համայնք, հասցե, գ Նոր գյուղ հեռախոս,
222 3 49 93 էլ.փոստ E-mail norgyux@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<10>> դեկտեմբերի 2015թ N 35-Ն

ՆՈՐ ԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության «Բյուջերային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ և 32-րդ մասի պահանջները, **ավագանին որոշում է**

Հաստատել համայնքի 2016թվականի բյուջեն եկամուտների և ծախսերի ներքոհիշյալ հատվածներով.

հարված 1	36758.1
հարված 2	36758.1
հարված 3	36758.1

հարված 4	0
հարված 5	0
հարված 6	36758.1

Կողմ

Դեմ

Ձեռնպահ

ԱՐՄԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ԱՂՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԱՂԱՍԻԱՆ ԹԱԴԵՎՈՅԱՆ
ԱՇՈՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՆՈՒԿԱՐ

ԳՐԻՇԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐ ԳՅՈՒՂ ՀԱՄԱՅՆՔԻ

2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

Հաստատված է Նոր գյուղ համայնքի

ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 10 -ի N 35-Ն որոշմամբ

Արժյանի տեղական զանձապետական բաժանմունք

(համայնքի բյուջեն սպասարկող տեղական զանձապետական բաժանմունքի անվանումը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



 Գրիշա Թադևոսյան

(Ամուն, հայրանուն, ազգանուն)